մեծագործութեանցդ հաստատել ի յօրհնեցեկլումդ քաղաքօջ տպագրատուն։ Զոր և բարեջան հետեմամբ և ծանր ծախուք ի կատարումն ածեր, առ ի յաճախումն հոգեշահ գրոց, որք ի յօգտութիւն քրիստոսականդ բանաւոր հօտի և եկեղեցւոյ սրբոյ։ Զոր և մեք իմացեալ՝ յոյժ ուրախացաք։ Եւ մանաւանդ ի նմա նորապէս տպագրեցեալ զտետրակ մի ևս ընկալաք և թարգմանեցուցաք, և տեսանելով զպարզութիւն և զրարեձևութիւն գրոցն, կարի հաւանեցաք։ Եւ ի ձեռն այսորիկ օրհնանուէր թղթոյ շնորհաւորեմ զնորահաստատ և զվայելչակերտ տպարանդ...»[1]։

Ինչպես նշեցինք, հիշյալ պայմանագիրը կնքվել է 1781 թվականին։ Մակայն բանասեր Գարեգին Լևոնյանը իր «Հայ գիրքը և տպագրության արվեստը» ուսումնասիրության մեջ նշում է, որ Հերակլ թագավորը Պողոս Արապյանին (Հովհաննիսյան) Թբիլիսի է հրավիրել վրացական տառերը բարեփոխելու 1774 թվականին. վերջինս գալով Թբիլիսի՝ կատարել է Հերակլ թագավորի հանձնարարությունը, վարձատրություն է ստացել և հայոց կաթողիկոսի հրավերով անցել է Էջմիածին՝ վանքի նորաբաց տպարանին տառեր տալու համար։

Գարեգին Լևոնյանը պատմական այդ տեղեկությունների համար որպես աղբյուր նշում է Սիմեոն կաթողիկոսի հիշատակարանը[2], որտեղ 1774 թվականին վերաբերող փաստաթղթերի մեջ, իրոք, տվյալներ կան վարպետ Պողոսի Էջմիածին մեկնելու, վանքի տպարանին նոր տառեր տալու մասին, սակայն այնտեղ ոչ մի խոսք չկա վրացական տառերի բարեփոխման մասին։ Ո՞րտեղից է վերցրել Գ. Լևոնյանն իր այդ տեղեկությունը՝ չկարողացանք պարզել։ Հավանաբար Պողոս Հովհաննիսյանը տպագրական գործով մի քանի անգամ է եղել Հերակլ թագավորի մոտ։

Ստորև բերում ենք Հերակլ Բ-ի և վարպետ Պողոսի միջև 1781 թ. կնքված պայմանագրի հայերեն մասի բնագիրը և լուսանկարը։

«Աստուծով ի թուին 1781 մայիսի 23 եղև ի Կոստանդնուպոլիս։

Զօրութիւն պայմանական գրոյս այս է, որ ըստ հրամանի Քրիստոսասպասակ Արքային Հերակլեայ[3] վրաց, որ ի Թիֆլիս, այսու դաշամբ։ Որ ես, ներքոյ գրեալ տպագրիչ Պողոս դպիրս, ի վերոյ թուոյն ընդ ասյն Մահտեսի Մելիտոնին գնալոց եմ մէկ սպասաւորաւ ի մայրաքաղաքն Թիֆլիս՝ առ ոտս գերագահութեանն նորին և անդ տպագրատուն իմն հաստատեալ զրոլոր տառս վրաց ի չէլիկ փորագրեալ, ապա ի պղինձ ֆօրմայ արարեալ, և անտի յարճիճ թափեալ, զոր ինչ գիրք խնդրեսցեն՝ զտառս շարեալ լաւագոյն մրով ի թէսղեալ կալեալ գիրք տպելոց եմ, ըստ արհեստի պատկանի տպագրչաց և քանի աշակերտ որ յանձնեսցեն ինձ, զրովանդակ արհեստն տպագրութեան, աննախանձ և առանց ինչ թագուցանելոյ ուսուցանել նոցա, մինչև առանձին զնոսին հմուտ տպագրիչ առնելոյ ջան դնելոց

---

[1] Հայկական ՍՍՌ Գետ. Մատենադարան, Արխիվային բաժին, կաթողիկոսական դիվան, թղթ. № 244, վավ. № 279։

[2] Գյուտ ա. քահանա Աղանյանց, Դիվան հայոց պատմության, Թիֆլիս, 1908 թ., գիրք Ը, էջ 304։

[3] Հերակլ թագավորի անունը գրված է վավերագրի տառերի էջի վերին աջ անկյունում։ փաստաթղթի մեջ նրա անունը գործածելու հարկ եղած դեպքում անվան տեղ պատվո նշան է դրված։ Հնում ընդունված է եղել թագավորների և կաթողիկոսների անունը գրություններում գրելու դեպքում պատվո նշան դնել անվան փոխարեն։